ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.10.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/156

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝

«Ֆոր Ստեյջ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Տ. Արշակյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, պետական գրանցման համար՝ 269.110.973307)

«Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Պողոսյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական N 03Ա278297)

«Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներ՝

Լ. Բոյաջյանի (լիազորագիր, տրված՝ 20.09.2019թ.)

Օ. Սահակյանի (լիազորագիր, տրված՝ 20.09.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.09.2019թ. թիվ 26/26-1/15363-2019 գրությամբ «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի 11.09.2019թ. թիվ 260 գրության հիման վրա, 17.09.2019թ. թիվ 26/26-1/15363-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերություններին (հետայսու նաև՝ ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունների ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունները Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.09.2019թ. թիվ 19/3197 գրությամբ հայտնել են հետևյալը.

«Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից 15.08.2019թ. կազմակերպված «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ էին ներկայացրել «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.09.2019թ. նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել ընկերությունների կողմից ներկայացված հայտերը՝ պատճառաբանելով, որ «դրանք չեն համապատասխանում հրավերի պայմաններին. համաձայն հրավերի 1-ին մասի 2.3 կետի՝ արգելվում է փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի: «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ

Փրոդաքշն» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված Հավելված 1՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարության մեջ լրացված 3-րդ կետում հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներկայացված է նույն ֆիզիկական անձի տվյալները:»:

20.09.2019թ. «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ն Ընթացակարգի շրջանակներում բողոք է ներկայացրել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որը ներկայումս քննվում է ԳԲՔԱ-ԼՕ-2019/68 ծածկագրով և օրենքի ուժով գնման գործընթացը կասեցվել է:

26.09.2019թ. ընկերությունները օգտվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 50-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթով նախատեսված իրավունքից՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել են համանման բողոք և ներկայումս մասնակցում են բողոքարկման գործընթացին:

Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/68 ծածկագրով բողոքարկման ընթացակարգով 26.09.2019թ. հրավիրվել է առաջին նիստ, որը հետաձգվել է և ներկայումս բողոքների քննությունը դեռևս չի ավարտվել:

Բողոքով ընկերությունները խնդրել են արգելել Պատվիրատուին գնանշման հարցման գործընթացում ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր, օրենքին հակասող և չեղյալ հայտարարել գնման գործընթացը և պարտավորեցնել Պատվիրատուին իրականացնել օրենքի պահանջներին համապատասխան (բաց մրցույթի ձևով) գնման նոր գործընթաց:

Ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով հարուցված վարույթի ընթացքն ուղղակիորեն կապված է բողոքի քննության արդյունքներից, քանի որ բողոքում «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ի կողմից բարձրացվել է գնման ընթացակարգը մի շարք խախտումներով անցկացված լինելու հանգամանքը, որոնց արդյունքում գնման գործընթացը կարող է օրենքի պահանջներին հակասող ճանաչվել և չեղարկվել:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետը բխում է Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասից, որի համաձայն՝ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.

2) սույն օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մասնակցության դեպքերի:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

ՀՀ –ում կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված կարևորագույն միջոցառումներից է եղել Օրենքի ընդունումը, որի առանցքային նպատակը պետական գնումների ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումն է:

Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի նպատակը գնման ընթացակարգերում շահերի բախման հնարավոր իրավիճակների բացառումն է: Գնման ընթացակարգերին մասնակցելու համար նման ցանկություն ունեցող անձի կողմից ներկայացվում է դիմում-հայտարարություն, որի մեջ, ի թիվս այլ տվյալների, նշվում են նաև իրական շահառուների մասին տվյալները: Օրենսդրի կողմից գնման ընթացակարգում իրական շահառուների բացահայտման նպատակն է հասնել մի շարք արդյունքների՝ գնումների թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման, շահերի բախման իրավիճակները կանխարգելման, կոռուպցիայի մակարդակը նաև ազատ մրցակցության սկզբունքի տեսանկյունից նվազեցման, որպեսզի արհեստականորեն գնաճ տեղի չունենա:

«Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար ձայնային սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածը հանդիսացող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում ապրանքների տեխնիկական բնութագրերը տրված են ոչ բավարար հստակությամբ, որի արդյունքում հնարավոր է մասնակցի կողմից առաջարկ ներկայացնել ինչպես նույն ապրանքի բարձրորակ և թանկարժեք (օրինակ «JBL» ապրանքանիշը), այնպես էլ որակյալ և ավելի մատչելի տարբերակը (օրինակ՝ «DAS»

ապրանքանիշը): Բնութագրի համաձայն՝ անհրաժեշտ է, որ մասնակիցը հանդիսանա իր կողմից ներկայացված ապրանքների պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում:

Բնութագրում նշված որոշ սարքավորումների տեխնիկական բնութագրերին համապատասխան «JBL» ապրանքանիշի սարքավորումների բացառիկ պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում հանդիսանում է «Ֆոր Ստեյջ» ՍՊԸ-ն, իսկ մի շարք այլ սարքավորումների տեխնիկական բնութագրերին համապատասխան «DAS» ապրանքանիշի սարքավորումների բացառիկ պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում հանդիսանում է «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ն, հետևաբար, բացի նշված ընկերություններից, որևէ այլ անձի կողմից չեն կարող այդ տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքավորումներ առաջարկվել:

Այսպիսով՝ եթե ընկերություններից որևէ մեկի կողմից հայտ չներկայացվեր գնման ընթացակարգին մասնակցելու համար, ապա, բնականաբար, գնման ընթացակարգին մասնակից որևէ այլ անձի կողմից չէր կարող գնահատող հանձնաժողովին առաջարկ ներկայացվել տեխնիկական բնութագրերին համապատասխանող այն սարքավորումները գնելու համար, որոնց միակ ներկայացուցիչը ՀՀ-ում հանդիսանում է հենց նույն ընկերությունը, որը չէր մասնակցի գնման ընթացակարգին:

Հետևաբար, ընկերությունների կողմից գնման գործընթացին միաժամանակյա մասնակցության հայտեր են ներկայացվել բացառապես մեկ նպատակով՝ այն է Հանրապետության համար բացառիկ նշանակություն ունեցող և իր տեսակով միակը հանդիսացող մարզահամերգային համալիրին հնարավորություն ընձեռնել ձեռքբերել ժամանակակից տեխնիկական սարքավորումներ, որոնց բացառիկ ներկայացուցիչները ՀՀ-ում հանդիսանում են ընկերությունները:

Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետի խախտումը կարող էր առկա լինել, օրինակ այն դեպքում, եթե ընկերությունները մասնակիցների միջև արհեստականորեն մրցակցություն ստեղծելու և դրա շնորհիվ մրցույթի արդյունքում ընկերություններից որևէ մեկի հաղթող ճանաչվելուն նպաստելու նպատակով ամբողջովին միևնույն սարքավորումների համար ներկայացնեին տարբեր գնային առաջարկներ:

Այսպիսով՝ վերը նշվածից բխում է, որ ընկերությունների կողմից Ընթացակարգի մասնակցության հայտեր ներկայացնելիս Օրենքի որևէ խախտում թույլ չի տրվել,

հետևաբար բացակայում է ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմք:

Ընկերությունները հայտնել են, որ միաժամանակ հաշվի առնելով, որ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցի լուծումն ուղղակիորեն կապված է գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ ԳԲՔԱ-ԼՕ-2019/68 ծածկագրով բողոքի քննության արդյունքներից, ուստի խնդրել են կասեցնել (հետաձգել) ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցի լուծումը մինչև ԳԲՔԱ-ԼՕ-2019/68 ծածկագրով բողոքի քննության արդյունքում որոշում կայացնելը:

«Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/156 ընթացակարգի շրջանակներում 23.09.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել են իրենց ներկայացուցիչների մասնակցությունը:

3. <u>«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.09.2019թ. թիվ 260 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից 15.08.2019թ. կազմակերպված «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ էին ներկայացրել «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունները: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.09.2019թ. նիստի ընթացքում որոշում է կայացրել մերժել վերոհիշյալ կազմակերպությունների ներկայացրած հայտերը, քանի որ դրանք չեն համապատասխանում հրավերի պայմաններին: Համաձայն Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետի՝ արգելվում է փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված

կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի: «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված Հավելված 1՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարության մեջ լրացված 3-րդ կետում հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներկայացված է նույն ֆիզիկական անձի տվյալները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/156 ընթացակարգի շրջանակներում 23.09.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/156 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/156 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընկերությունների ներկայացրած հայտերը չեն համապատասխանում հրավերի 1-ին մասի 2.3 կետի պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունների հայտերը մերժվել են:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.09.2019թ. թիվ 26/26-1/15363-2019 գրությունը, «Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի 11.09.2019թ.

թիվ 260 գրությունը և կից փաստաթղթերը, «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված դիրքորոշումը, գտնում եմ, որ առկա են ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող

կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.

2) սույն օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մասնակցության դեպքերի:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն՝ տվյալ գնման գործընթացում իրեն, սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին:

Կարգի 32-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգին արգելվում է սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը:

«Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.3 ենթակետով սահմանվել է, որ արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընկերությունների ներկայացրած հայտերը չեն

համապատասխանում հրավերի 1-ին մասի 2.3 կետի պահանջներին: Մասնավորապես՝ երկու ընկերությունների հայտի հավելված 1՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարության մեջ լրացված 3-րդ կետում ներկայացվել է նույն ֆիզիկական անձի տվյալները:

Նույն արձանագրության համաձայն՝ «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունների հայտերը մերժվել են:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:

«Ֆոր Ստեյջ» ՍՊԸ-ն և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ն «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացրել են առանձին հայտեր: Թե «Ֆոր Ստեյջ» ՍՊԸ-ի և թե «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ի հայտի թիվ 1 հավելվածում՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարության 3-րդ կետում, իրական շահառուների վերաբերյալ տվյալներում լրացվել է «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Տիգրան Վազգենի Արշակյանի տվյալները (ներառյալ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում

ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 119-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները,

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն,

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ,

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ **եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը**

չհամապատասխանող, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունները Ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության 3-րդ կետով հայտարարել և հավաստել են, որ բացակայում է «Ֆոր Ստեյջ» ՍՊԸ-ին և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության դեպքը, մինչդեռ, հիմք ընդունելով Կարգի 119-րդ կետի 3-րդ ենթակետը, գտնում եմ, որ «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունները հանդիսանում են փոխկապակցված անձինք, ուստի վերջիններիս կողմից ներկայացված վերոհիշյալ հայտարարությունները համարվում են իրականությանը չհամապատասխանող:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունները թույլ են տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Միաժամանակ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, կարևորելով գնումների ընթացակարգերի մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, գտնում է, որ «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցի լուծումն ուղղակիորեն կապված չէ ընկերությունների կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված՝ «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ընթացակարգը չեղյալ հայտարարելու և բաց մրցույթի ձևով գնման նոր գործընթաց կազմակերպելուն պարտավորեցնելու պահանջի մասին բողոքի քննության արդյունքների հետ, քանի որ տվյալ դեպքում «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերությունների կողմից Ընթացակարգի շրջանակներում դրսևորած վարքագիծը, թույլ տրված խախտումը չի հանդիսանում ընթացակարգի կազմակերպման համապատասխան ձևի ընտրության հետևանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.09.2019թ. թիվ 26/26-1/15363-2019 գրությամբ «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ֆոր Ստեյջ» և «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊ ընկերություններին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**